

## X ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ<sup>1)</sup>

### III.

Կանանց բարոյականութիւնը.

Մի կողմ թողնելով ամերիկական կնոջ դրութիւնը, որն իր պատմական հանգամանքներին է պարտական, ի նկատի ունենանք եւրոպացի կնոջը: Ամուսնական ալգականը դրութիւնն ուր կարող է տանել հասակն առած աղջիկներին, մանաւանդ նրանց, որոնք դրա հետ ի միասին նիւթական նեղ դրութիւն, վատ շրջան, հրապուրիչ շրջապատ, խարուսիկ, փալուն լոլսեր, գրաւիչ կեանք և այլ ալսապիսի հանգամանքներով են շրջապատուած: Այս բաների մասին տւելի կենդանի և զօրեղ տպաւորութիւններ կստանալ նա, ով երոպական մեծ քաղաքներում եղել է և մի փոքր դիտել է պիդ կեանքի պակասաւոր կողմերը: Ալդպիսի անհատն անշուշտ ամեն մի քայլափոխում տեսած կլինի կանանց թշուառ և ընկած դրութիւնը. ամեն տեղ, ամեն գործում և ամեն կողմում վիստում են ծառալող կանալք. — ինչ նա սրճարան, ճաշարան, բեստօրան, վաճառատուն, արհեստանոց, ցիրկ և ալլն: Կըտեսնի, թէ ինչպէս գինետներում, հիւրանոցներում և սրանց նման հիմնարկութիւններում ծառալող կանալք, տեսակ-տեսակ ստորութեան, նեղութեան են ենթարկուում: Լինելով ալգականի պաշտօնների մէջ, ստիպուած զանազան միջոցներով հիւրերին զբաղեցնում, անթերի ծառալութիւն, դուրեկան հաճուախօսութիւններ, այս կամ այն իրան աննպաստ զիջողութիւններ են անում. ինչպէս

պարոնների մօտ նստում, նրանց հաշուով գարեջուր, ոգելից խմիչքներ խմում, թոյլ են տալիս իրան հետ խաղալու, զուտքաճանալու, շատ անգամ էլ իր խոստումներով պարոնների մէջ կուռածաղիկ դառնում և ալլն: Հենց այսպիսի տեղերում հետաքրքրիր դիտողը քստմնելի, մարդկալին գաղանու թիւնների սրտաճմլիկ պատմութիւններ կարող է լսել. թէ ինչպէս նա խոստովանահօր, մօտիկ բարեկամի, կամ ազնուութեան ու սկզբունքի անունով խօսողների ստոր, խարեւայ վարմունքի շնորհիւ ալդ գրութեան մէջն ընկատ. ինչպէս իրան խարդախ միջացներով խարեցին, թշուառացրին և անգամ պարտքի կամ ալլ բանի համար հասարակաց տուն պահողներին վաճառեցին և ալլն և ալլն:

Միւս կողմում տներու մ ծառալող աղախինները կտնանց ընկած դրութեան մի ալլ պատկեր են ներկայացնում, և սրանց թիւն առաջիններից առաւել է: Նւրաքանչիւր աղախին իր սիրեկանն ունի. սա շատ անգամ նրան քաղցրաւենիք և թեթև ընծաներ է բերում: Նա իր սիրուհուն տանում է տև կամ ալն զուարճալի տեղերը, հրւասիրում և հետն էլ ուրախ ժամանակ անցկացնում: Սիրեկան ունենալն ալնքան սովորական բան է դարձած բոլոր ծառալող կանանց համար, որ վստահ կերպով կարելի է ասել 100-ից հազիւ ճ-ը կամ 10 ը սրանից ազատ իինեն: Դեռ ալդ բաւական չէ. շատերը մէկի տեղը մի քանի սիրեկաններ ունին և ամենքի հետ էլ նոյն զուարճալի կեանքը վարում. օր. գիւղական աղջիկը գիւղում մէկն ունի, քաղաքումն էլ մէկը, տեղափոխուելով մէկ թաղից միւսը, ալնտեղ ևս մի ուրիշն է գտնում և ալլն: Սիրեկան ունենալուց նրանք ոչ ոքից չեն քաշում, նոյն իսկ ծնողներից, սրանք շատ անգամ տեսնում են, որ աղջիկն իր պարոնից այս կամ ալն զարդարանքը, ընծան, ուտելիքն ստացաւ, բայց և ալնպէս շատ անտարեր են վերտքերում, ընդհակառակը՝ երբեմն ուրախանում են: Մեր խօսքը սակաւաթիւների մասին չէ, Աղջիկները սիրեկան ունենալը իւրեանց մէջ մի տեսակ պարծանք են համարում և շատ անգամ նրանցով հպարտանում են. Այսպէսով այս դասակարգի ծառալող

կանանց ծախսի մի մասն էլ իրանց սիրականներն են հոգում և դրանով կամ շռայլութեան, զուարճութեան և սրա նման բաների սովորեցնում։ Հէնց այս սիրեկաններն են, որ նրանց թողնում հեռանում են և պոռնկութեան ճանկն են ձգում։ Յաճախ նրանցից առաջացած որդիներն անխնամ մնում և նոյն իսկ մալրերի ձեռ քով խեղդուում, սպանուում են։

Ալսպիսի գրութեան մէջ ինչ է մնում կանանց անել. երկու բան՝ կամ իրանց զսպել և կամ բնական պահանջին բաւականութիւն տալ. Ինքնազսպութիւնը գժուար, մինչև անգամ անհնարին է, մանաւանդ այնպիսի հանգամանքներում, որտեղ ամեն մի քալլափոխուում գրգիռ, առիթ անպակաս են։ Այս ինչ հասակաւորները, մանաւանդ սեռական ձգտումներին շատ անգամ բաւականութիւն տուաղների համսր, ասստիկ գժուարութիւններ են առաջ գալիս։ Բնազդական ներքին գրգիռը բաւականութիւն է պահանջում, և որովհետեւ աղջիկն ալդ ժառ անգակսն ձգտումին չի էարող օրինական ճանապարհով, այսինքն տմուսնութեամբ լագուրդ տալ, ուրեմն մնում է որ ալլ կերպ դրան գոհացումն տալ, ինչպէս և անում է, ընկնելով ուրիշ գիրկը։

Պրօֆ. Փօյնիցկի իր «Թեհապիա պրեստյոնից<sup>1)</sup>» հետազոտութեան մէջ ասում է, «մարդու կեանքի մէջ պատահած իւրաքանչիւր կարիքն ոյժերի լարուսծ դըրութիւն և համապատասխան գործունէութիւն է առաջ բերում, որպէսզի ալդ պահանջին բաւականութիւն տար իսկ եթէ ալդպիսի գործունէութեան համար օրինական միջոցներ չկան, այս ժամանակ մնում է այն, որ պէտք է կամ ալդ կարիքը թողնէ առանց բաւականութեան, կամ թէ դիմէ անօրինական միջոցների, որոնց թւումն է և լանցանքը, թէ վերոլիշեալ պատճառները կանանց պոռնկութեան գիրկը ձգելու որչափ ազդում են, պարզ լինելու համար, Փարիզի բժիշկ պարոն Դիլշատլէի կատարած վիճակագրութիւնը շատ հետաքրքիր է։ Նա ասում է. «Ե, 000 ալդպիսի կանանց քննութիւնից գուրսեկաւ, որ նրանցից 1440 ը պոռնկութեամբ են պարա-

<sup>1)</sup> Съверный Вѣстникъ 03 գետ.:

պում կարիքից, ալսինքն խեղճութիւնից և քաղցածութիւնից ստիպուած. 1250-ը որբեր լինելով, խնամակալներ և պահողներ չունենալով, նոյն կարիքից ստիպուած դիմել են ալդ միջոցին, 380-ը իրանց կամքով են գիմել ալդ բանին. ծերացած ծնողներին պահելու համար. 1400-ին սիրեկանները թուղել հեռացել են և նրանք ստիպուած դիմել են ուրիշ սիրեկանների. ուրանք էլ նոյն խաղերն են խաղացել, այնպէս որ աղջկները դարձեալ պոռնկութեան են դիմել. 400-ը խաբուել են զինուորներից և սպաններից. 280-ին սիրեկանները թողել են՝ լիի լինելու պատճառով: Ի հարկէ ալս թուերի մէջ գեռ չկան անլայտ և թագուն կատարուածները, որոնք անհամեմատ դրանցից շատ են: Միւնոյն կարծիքն է յայտնում և հոգեբոյժ պրօֆ. Բերինդ<sup>1)</sup>). սա, բացի վերոլիշեալներից, աւելի մանրամասնօրէն պատճառների և հանգամանքների մէջ մտնելով՝ ցոյց է տալիս, թէ ուրիշ բնչ աւիմներ կան դրա համար: Նրա տեղեկութիւններին նայած, պոռնկութեան ճանկն ընկնողներից սմանք խորթ ծնողների, անպիտան մայրերի զոհերն են. Ալդ ծնողները նրանց չուզենալով պահել, գիշերը տեղ չեն աալիս, տանջում, նեղ դրութեան մէջ են դնում, այնպէս որ, խեղճերն ստիպուած իրանց գլուխը պահելու համար կամայ-ակամալ ալդ միջոցին են դիմում: Կան անգամ նոյն իսկ հարազատ մայրեր, որոնք պարուններից ընծաներ, փող ստանալով՝ իրանց ձեռքով աղջկներին նրանց են յանձնում: Լինում են ընտանիքներ, որոնք կարիքից ստիպուած, միասին մի սենեակում տպրելով, անզգոյշ կերպով խօսելով, գիշերը միասին քնելով, աղջկներին օր առաջ գրգռում են. Այնուից շատ նպաստում է շրջապատը, ընկերական շրջանը, որոնք մէկ-մէկու հեշտութեամբ վարակում և օրինակ են գառնում: Պոռնկութեան զարգանալուն ոչ պակաս զարկ են տալիս վաճառականները, որոնք իրանց կրպակների համար նրանց վարձելով; ընտրում են գեղեցիկներին և տալիս են բաւարար ոռնիկ, այն պայմանով, որ իրանց ցանկութեանն էլ բաւականութիւն

<sup>1)</sup> Prostitution

տան. Հակառակ դէպքում չեն վարձում, կամ արտաքսում են: Պոռնիկների մէջ տւելի մեծ տոկոս են կտղմում գիւղից եկած աղջկները: Նրանք գալիս են քաղաք գործ գտնելու, որ իրանց և ծնօղների դրութեան օգնելով՝ բաւարար դրութեան մէջ ընկնին: Բայց դըժբախտաբար թշուառութեանն աւելի զարկ են տալիս և անմեղ զոհերի պատճառ լինում: Նրանք գիւղական փոքրիկ, նեղ շրջանից ընկնելով յեծ քաղաքների ծովացած անլատակ կեանքի մէջ, ապշում են և չգիտեն ինչ անեն. ոչ ոք չունին առաջնորդ, որ ոստիկանութեան դէմ պաշտպանէ. ապրելու համար թոլլտուութիւն ստանայ: Խսկ արդպիսիներին չորս աչքով հետևում են մարդորս կանալք, որոնց զբաղմունքն է խեղճերի միամտութիւնից օգտուել, նրանց պաշտպան հանդիսանալ: գործ գտնել, ոստիկանութեան դէմ պաշտպանել, սուս վկալութիւն տալ և մի գեղեցիկ օրէլ այս կամ այն պարոնի կրքերին զոհ բերել. իհարկէ վազօրօք ստանալոյ իրանց աշխատութեան վարձը:

Միեւնոյն ժամանակ արդ աղջկները հետզհետէ զուարճութիւնների և գրաւիչ, հրապուրիչ ուրախ կեանքի սովորելով, կարծում են, թէ արդէն երջանկութեան մէջ են ընկել, այնպէս ոչ ալլ ես չեն կարող տխուր և բաւականութիւններից զուրկ գիւղի մասին մտածել կամ այնտեղ վերադառնալ: Քաղաքում մնալով՝ քանի գեռ իրանց թարմութիւնը չեն կորցրել, արդպիսի կանանց մօտ սաստիկ թանգ գնով ապրում են և անգութանտիրուհիների բոլոր խիստ պահանջներին բաւականութիւն տալիս: Խնչ անեն խեղճերը, երբ նրանցից կախումն ունին, մի թեթև հակառակութեան դէպքում ոստիկանութեան ձեռ քը կը մատնեն, որի հետևանքը լինում է գիւղ վերադառնալ, մի բան, որին ալժմ նրանք չեն ցան. կանալ: Եթէ քաղաքում էլ մնալ, ալլ ևս առաջուալ պէս ալցելող պարօններ չի կարող ունենալ. մնում է թագուն կերպով երեկոները հիւրեր գտնել, որ մի կերպ կեանքը քաշ տալ: Արդպիսիներ քաղաքներում հազարաւորներ կան և շատ անգամ մի կտոր չոր հացի կարօտ լինում և միալն դրա համար ուրախութեամբ իրանց ծախում են:

Նատ անդամ գիւղից եկած նորեկները քաղաքի հրաշալիքների, ուրախ կեանքի մասին ընկերուհիներին գրելով, գիւղից դէպի քաղաք մի հոսանք է սկսւում, իսկ կրկին յետ դառնալ գիւղ՝ դա քշերին է յա ջողուում։ Պոռնիկների թիւն այս միջոցով աւելի շատանում է բերլինում, քան Պարիզում և Լօնդոնում։ Պրօֆ. Բերինդ նկատում է, թէ պոռնիկների մէջ գլխաւորապէս երեք աչքի ընկնող լատկութիւններ կան. ա) ծուլյութիւն. նրանք կամ ոչինչ չեն ուզում անել և կամ թէ փոքր ի շատէ ծանր աշխատանքից խուսափում են և մեծ մասամբ ուրախութեան, զուարճութեան են հա. կուած. բ) աւելյորդ զարդարասիրութիւն. այս բանը նոյն իսկ երեսում է հիւանդանոցներում գտնուածների վերայ ևս։ Նրանք թէն հիւանդ, բայց դարձեալ դրանից չեն հեռանում և անկողնում նստած՝ մազերը խուճում դնում, զարդարանքներով զարդարւում, հագնույ են և ալին. գ) ստախօսութիւն եւ շրայլութիւն. մանաւանդաւելի ենթարկուած են քաղցրաւէնիք, խմիչքներ գործածելու մէջ. իսկ այս բաները եթէ ժառանդաբար անցնի մի քանի սերունդների, արդէն մի տեսակ ներքին պահանջ կը դառնար։ Այս բաները մասամբ հասկանալի են շատ անդամ նրանք նիւթական նեղ դրութիւնից, այս կամ այն հանգամանքից դիմում են այդ միջոցների և նեղն ընկած գէպքում ամեն ինչ ուրանում, գողութեան դիմում և ալին։ Մեծ քաղաքներում կան պորտագոյծ երիտասարդների մի ուրիշ խումբ ևս, ոքոնց օգնութեամբ ոստիկանութեան յալտնի պոռնիկները նրանց թեևն ընկնելով, մտնում են իրանց արգելուած նշանաւոր փողոցները, հրապարակները, հիմնարկութիւնները և իրանց համար նորանոր որսեր գլանում և ստացածի կէս մասը իրեն թևարկող պարոնի բաժին է լինում։ Այսպիսի դէպեքերում այլ ևս ոստիկանութեան պահապանը նրան չի հալածի, իսկ եթէ պատահի, այն ժամանակ նա կը մօտենալ և որպէս իր կինը, կը պաշտպանի, բանտից կազատէ։ Պրօֆ. Բերինդն էլ Դիւշատէի նման կարծում է, որ ոստիկանութեան յալտնի պոռնկութիւնն ալնչափ չէ, որչափ մասնաւոր, թագուն մնացածները, բերլինում ոստիկանութեան տու-

ած տեղեկութիւններից երևում է, որ մի քանի տարի շարունակ յալտնի անառակ աղջիկների թիւը հասել է մինչև 5,000-ի, այն ինչ՝ մտնելով ժողովրդի ամեն խաւերի, բեստօրանների, հիւրանոցների և այլ գրանց նըման տեղերում, դուրս է գալիս որ ալդպիսի գործով պարապող աղջիկների թիւը 30,000-ից անցնում է: Երեւում է՝ որ Լոնգոնում 60 թուականների սկզբներում գրանց թիւը 80,000 է էր հասնում: Պարիզում ոստիկանութեան տեղեկութիւններից երևում է, որ մինչև 69 թիւն ալդպիսի աղջիկների թիւը 4,000-ից չի անցնում, այն ինչ՝ նոյն թուականին Պարիզի քաղաքալին ժողովի տուած հաշուից երևում է՝ որ նրանց թիւը մինչև 120,000 է է հասնում: 1860 թ. Համբուրգում 15 տարեկանից մեծ 8 կանանց վրայ մէկ պոռնիկ էր ընկնում: Նոյն թուականում Լայպցիգի ոստիկանութեան տուած հաշուից դուրս եկաւ, թէ ալդ կանանց թիւը 564 է, այն ինչ իսկապէս 2,000 ից շատ էր: Ի հարկէ այն օրուանից մինչև օրս նրանց թիւը քանի գնում, զգալի կերպով շտապանում է: Հէնց օրինակ, վեր առնենք Գերմանիայում ճանապարհորդ, այստեղից ուրիշ երկրներ աղջիկներ արտահանող վաճառական Բ. Եօստին, որը իւր «Aus Japan nach Deutschland durch Sibirien» գրքում շատ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս: Նա ասում է «Նատ անգամ մեր ողջախոհ Գերմանիայում, արևմտեան Աֆրիկայում ստրօտկ գերիների վաճառման դէմ բորբոքւում և բողոքում են. նոյնն են անում կափլանդիայի և Բրազիլիայի վերաբերմամբ, թէև նրանց տեղական օրէնքով գերեվաճառութիւնը թոլլատըրած է» բայց աւելի լաւ չէր լինի նախ երենց աչքի գերանը տեսնէին. ոչ մի երկրում ալդ կենդանի ապրանքից այնչափ արտահանութիւն չկայ, ինչպէս Գերմանիայում և Աւստրիայում: Կարելի է անգամ ալդ աղջիկների ուր տարած ճանապարհները որոշել. ինչպէս օր. Համբուրգուց տանում են Հարտաշին Ամերիկա. նախ Բագիսն և Ուէօջանէլրօ իրենց բաժին են ստանում, ապա մեծ մասն ստանում է Մօնգեկելերիօ և Բուէնոս-արեէս, այս արտահանութեան մէկ միւզն է: Միւս ճիւղն Անգլիայով կամ առանց այնտեղ

հանդիպելու՝ անցնում են Հիւսիսային Ամերիկա. այս-  
տեղ իհարկէ գերմանական կենդանի ապրանքը դժուա-  
րութեամբ է տեղական աղջիկների հետ մրցում։ Այդ  
պատճառով այդ հոսանքն անցնում է Միսիսիպով  
մինչև Նիւօրլէան կամ արևմտեան Կալիֆորնիա. այս-  
տեղ բերած ապրանքը ծախուելով, հասնում է մինչև  
Պանամա։ Արևմտեան Հնդկաստանը և Մեկսիկան իր  
բաժինն ստանում է Նիւօրլէանից։ Գերմանական աղջիկ-  
ների մի ուրիշ բանակ արտահանում է Ալպերով ի-  
տալիա, իսկ գրանից յետոյ դէպի հարաւ՝ Աղէքսանդ-  
րիա, Սուէզ, Բոմբէլ, Կալկաթա, և Սինկապուր և  
մինչև անգամ Նանխալ։ Ուսւսաստանն այդ կենդանի  
ապրանքից իր բաժինն ստանում է արևելեան Պրուսա-  
յից, Պոմերանիայից և Լեհաստանից։ Այդ բանի առաջին  
կարանը Բիգան է, Այստեղ Մոսկուալի և Պետերբուրգի  
վաճառականները նրանցից ջոկում, ընտրում և տանում  
են նաև Նիժնի-Նօվգորոդ, ալյուհետև Ռուբալից մինչև  
Երբիդ, մինչև անգամ Սիբիրիալի Խորքերը։ Այս առև-  
տուրը և նրա ճանապարհորդութիւնն այնքան կանո-  
նաւոր է լինում, որ եթէ գերմանական արտաքին գոր-  
ծոց նախարարը կոնսուլներից պահանջէ, անշուշտ շատ  
հետաքրքիր տեղեկութիւններ կստանար։

Պունկութեամբ պարապող, ընկած՝ կանալք ոչ  
միայն իրանց թշուառացնում են, ալլ և մատաղ, ծա-  
ղիկ հասակում գտնուած շատ երիտասարդների զանա-  
գան տեսակ վարակիչ ախտերով, մանաւանդ սիֆիլիսով  
վարակում են։

Պրօֆ. Բերենդի տեղեկութիւններից երեսում է, որ  
մի աղջիկ 6 ամսուալ մէջ օրական 6—7 այցելողներ  
ունենալով՝ 300-ից աւել մարդ է վարակել։ Մի 16  
տարեկան աղջիկ 4 ամսուալ ընթացքում 80 մարդ է  
վարակել, իսկ մի ուրիշն էլ մի քանի տարուալ մէջ  
600 մարդ և ալլն։ Իսկ եթէ մենք բոլոր պոռնիկների  
թիւը և նրանց առաջացրած վնասներն իրանց և ուրիշ-  
ներին ի նկատի ունենանք, այն ժամանակ մենք  
մարդկութեան կատարած այդ հրէշաւոր գործից կամայ  
ակամայ պիտի զգուէինք և երեսներս շուռ տալով՝ հե-  
ռանալինք։ Եթէ այս ամենի վրայ աւելացնենք ապօ-

րինի ծնունդները, սաղմալին դրութեան մէջ արհեստական կերպով որդիների փչացնելը կամ ծնուելուց յետով անխնամ դրութիւնից մեռածները, սպանածները, այն ժամանակ կանանց թշուառ դրութիւնն աւեն կողմից պարզուած կլինի: Հէնց օրինակ, միայն Պարիզում ըստ Բ. Սպանտօնալի 1,268 ծնուածներից 937-ը օրինաւոր ծնողներից են, իսկ 341-ն ապօրինի, ալսէնքն մօտաւորապէս 43 ը. Բոլոր ֆրանսիական քաղաքներում ապօրինի ծնուածների թիւն օրական 17,000-ի է հասնում: Ֆրանսիական, մանաւանդ Պարիզի կանանց լնկած և թշուառ դրութիւնը շատ գեղեցիկ կերպով դուրս է բերում է. Զօլան իր Բեղյանաւորումն վէպի մէջ: Ալստեղ առ հասարակ եւրոպական կեանքի պատկերն այնչափ կենդանի, իրական կերպով դուրս է բերած, որ ընթերցողի առաջն ամեն ինչ քստմնելի գորներով է ներկալացնում: Ապօրինի ծնուածների թիւն այնչափ շատ է լինում, որ իսկապէս պատրաստած մանկանոցները բաւական չեն և ալդ հիմնարկութիւններն անգամ աւելի էժան գնով գիւղացի կանանց են բըռնում պահելու, մեծացնելու. իսկ այս լնչաքաղց և անգութ ծծմալրերը շատ անգամ ձմեռը լուսամուտների փեղկերը բաց թողնելով՝ մրսեցնելով մահացնում են. ալնպէս որ կարելի է ասել, ֆրանսիան ամեն տարի ֆրանս-պրուսական պատերազմ ունի և նոյնչափ հալրենիքի որդիների կորուստ է հաշլում: Ալսպիսի գէպքեր պակս չեն և ուրիշ պետութիւնների մէջ: Շատ անգամ մայրերն իրանց որդիներին սաղմալին դրութեան մէջ ոչնչացնելով, կամ նոյն իսկ ծնուելուց յետով նրանց սպանելը պրօֆ. Մանտեգացցան այսպէս է բացարում: Կող գործած լանցանքներից ամենազլիս. լորը որդեսպանութիւնն է. բայց եթէ խորը քննենք, կը տեսնենք որ բոլոր մեղքը միայն նրանը չէ: Ալդ լանցանքն առաջանում է մեր խիստ նախապաշտումից, որի պատճառով ամբողջ անպատւութիւնը միայն կնոջ վրա է ընկնում: Ծզամարդն ազատ կերպով կարող է իր ապօրինի որդիներով որոշ հիմնարկութիւններ լցնել, օրէնքն այս բանի համար նրան չի պատժում. իսկ հասարակութիւնն էլ մի առանձին արհամարհան-լուրսն

քով չի վերաբերուի դէպի նաև Սրա հակառակ՝ խեղճ մալը միշտ կը մնայ անպատռած, անարգուած, ըն տանիքը, հասարակութիւնը նրան կը մերժի, այնպէս որ նա ստիպուած, յաւիտեան ամուրի է մնալու, կամ պոռնկութեամբ զբաղուելու։ Ահա թէ որտեղից է առաջանում ապօրինի որդոց սպանութիւնը։ Եթէ մի թեթև ակնառկ ձգենք Ռուսաստանի սէջ տարածուած պոռնկութեան մասին, այն ժամանակ կը տեսնենք՝ որ ոչ մի բանով միւս պետութիւններից լետ չի մնում. իսկ վեսերական ախտերի, մանաւանդ սիֆի, իսկ կողմից շատ տեղերում նոյն իսկ գերակշռում է։ Այդ տոմիւ եթէ յենք անցեալ դարու կէպից, ամսինքն 1850-ական թուականներից նայենք և հետևելով դանք դէպի մեր օրերը, այն ժամանակ մենք կը տեսնենք, որ մայն քաղաքալին հիւանդանոցներում բժշկում էին ալսչափ մարդ<sup>1)</sup>։

1861 թ.	— 37,075 մարդ	1865 — 62,533 մարդ
1862 —	42,438 »	1866 — 67,799 »
1863 —	47,035 »	1867 — 74,234 »
1864 —	62,637 »	1868 — 87,077 »
		1869 .. 89,247 »

Այստեղից պարզ է, որ 10 տարում գրեթէ  $2\frac{1}{2}$  անգամ նոցա թիւը աւելացել է։ Նոյն իսկ Պ. Բուրգում, ուր այդ բանի վերալ աւելի են ուշք դարձնում, նոյնն է։

Նոյն թուականներին դարձեալ մի որոշ չափով նըրանց թիւը բազմացել է. այսպէս. 1861 թ. նըրանց թիւը 6,359 էր, իսկ 1868 թ. 14,895-ի հասաւ. Ինչպէս արևմտեան պետութիւնների մէջ, նոյնպէս էլ և Ռուսաստանում որպէս իսկական ճիշտ թուեր չեն կարող համարուել, քանի որ երկու և երեք անգամ աւելի գաղտնի կերպով զանազան ժողովրդական բժիշկների մօտ են բժշկում. շատերն էլ ծածուկ պահելով, տարածում են ընտանիքների և խոր գաւառների մէջ, ո-

<sup>1)</sup>Տես Ժենскoe ճելո во второмъ половинѣ XIX вѣка, Шапкova.

բով քանի գնում է, դրանց թիւը շատանում է։ Շաշկովը իր վերոլիշեալ գրքի մէջ այդ ամենով չբաւականանալով, աւելացնում է որ ամբողջ Սիբիրն էլ վարակուած է այդ մահաբեր ախտով։ Սրա պատճառը նահամարում է աքսորուածները, ըրջմոլիկները, թափառաշըլիկ բաղդախնդիր առևտրականները և զօրքը։ Ամուրի շրջակալքում, ասում է նա, մինչև ուսաց տիրապետութիւնն այդ ախտի մտախն գաղափար չունէին, այն ինչ, 1858 թուին Նիկողայոսեան հիւանդանոցում 136 արդարիսի հիւանդներ էին բժշկում, իսկ 1867 թուին 236-ի հասաւ, ներկայումս Կամչատկայում դժուֆուար է գտնել սիֆիլիսով շվարակուած ընտանիք։ Որուսական քաղաքներից Պետերբուրգը Պարիզից, Լոնդոնից, Բեռլինից յետ չե մնում, իսկ միւս կենդրոնները, ինչպէս Մոսկուա, Վարշաւա, Կտղան, Օդէսա, Նիժնի և ալլն, աւելի շատ անբարոյականացած են, եթէ ոչ թւով գոնէ որակով։ Անբնական ախտերը, ործապղծութիւնը, մանաւանդ օնանականութիւնը և կենդանիների հետ յարաբերութիւն ունենալը Որուսաստանի զանազան մասերում անհամեմատ աւելի շատ են տարածուած, քան Եւրոպական պետութիւնների մէջ։ Որուսաստանում պոռնկութիւնը զանազան կերպ, զանազան ոովորութիւններով տարածուել է, այդ բաներից լիշենք մի քանի նշանաւորները, որոնք առհասարակ ազգաբնակութեան մէջ ընդհանրացած և մի տեսակ սովորութիւն է դարձած։

I. Հիւրասիրութիւնից առաջացած պոռնկութիւն. սկզբաւորութիւնը պէտք է որոնել հնութեան մէջ. այն ժամանակներում, երբ հիւրն Աստուծուց ուղարկուած էր համարւում, և նրան իրանց ունեցած ամենքանով հիւրասիրում էին, մինչև անգամ սեփական կնոջով և աղջկանով. ապս այս սովորութիւնը ժամանակի ընթացքում շահասիրական նպատակով չարը գործ դրուեց, այնպէս որ այժմ Նիւսիսալին Որուսաստանում տասնտէրը տուն վարձով տալիս՝ առաջարկում է նոյնակէս իր կնոջը կամ աղջկան, իհարկէ դրանով տան վարձը կը կնապատկում է։ Ուրիշ տեղերում հիւրանոցներում իշեանողներին նոյնպէս առաջարկում են սեփական կամ

ալլ կնոջ։ Այս տեսակ պրունկութեան կարգին կարելի է հաշուել նոյնաչս «ԵՎԵԿԵՐՆԱԾ» կոչուած սովորութիւնը։ Մօլոռոսների մօտ, աշնանը, դաշտալին աշխատանքները վերջացնելուց լետոյ, իւրաքանչիւր երեկոյ ջահել աղջիկները և տղաները հաւաքւում մի այրի կնոջ մօտ։ Սրանք ամենքն էլ իրանց հետ ընծալ են բերում՝ օղի, ձու, կաթ, հաւ, փող և ալլն, և մինչև կէս գիշեր ընդհանուր քէֆ է լինում. ապա հէնց ալդտեղ զուգ-զոյգ պառկում են մինչև աշխատանքների սկսուելը։ Ծնողներն այս բանի վրայ նայում են իրբեւ շատ սովորական երեսլիթի վրայ և միայն այն ժամանակ են գժգոհութիւն լայտնում, երբ այս կամ այն ընտանիքում լղի աղջիկներ են տեսնում։ Ա. Կրօնական պղոնկութիւնն. այս բանն առհասարակ որոշ կրօնական հերձուածողների մէջ է պատահում և կայ նորն իսկ բարձրագասակարգի մէջ։ Աստուածպաշտական արարողութիւնից, ալսինքն աղօթքներից լետոյ, ծեծելուց ու լացուկոծից լետ, կրակները հանգցնում են և մթութեան մէջ սարսափելի անբնական լարաբերութիւններ է կատարւում։ Նատ անգամ մայր և որդի, հայր և աղջիկ, թոռ և տատ և ալլն, իրար հետ լարաբերութեան մէջ են մտնում։ Այս սովորութիւնը լառաջ է եկել կրօնական մոլեռանդ սովորութիւնից։

## Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)